Հայտարարություն

Մրցույթ՝ <<ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հովհաննես Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ—ի Հասարակագիտություն /9դասաժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1 . դիմում , ինքնակենսագրություն (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3 . անձը հաստատող փաստաթուղթ,

4 . «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

6 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

- ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի հ.596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում):

- Հանրակրթության մասին օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում `հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք:

- Հանրակրթության մասին օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ն կետով (առկայության դեպքում նաև 2-րդ կետով) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:

Մասնակիցները փաստաթղթերի բնօրինակները հուլիսի 20-ից 24-ը ներկայացնում են տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձին: Պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և նույն օրը բնօրինակները վերադարձնում է մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև մրցույթին նախորդող աշխատանքային օրը վերացնել կամ համալրել դրանք :

Մասնակիցները փաստաթղթերը ներկայացնում են սույն թվականի հուլիսի 9-ից մինչև 23 -ը ներառյալ,ամեն օր ժամը 10:00-15:00,բացի ոչ աշխատանքային օրերին:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. հուլիսի 27 -ին՝ ժամը 11:00-ին, Լեռնավանի միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Լոռու մարզ ,գ. Լեռնավան 11փ,դ18:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 325931 հեռախոսահամարով: